«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի 19.05.2021թ. թիվ 7 նիստում:
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գեներալ-մայոր
Մ. Բաբայան
«_____»_____ 2021 թ.

ԿԱՐԳ

«ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՊԱՐԵԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ (ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՄԱԼԻՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրում (այսուհետ՝ Կրթահամալիր) «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորման նախնական մասնագիտական կրթական ծրագրով պետական ամփոփիչ ատեստավորման (այսուհետ՝ ամփոփիչ ատեստավորում) կազմակերպման և անցկացման ընթացակարգերը:

1.2. Սույն կարգը կիրառվում է նաև «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորման նախնական մասնագիտական կրթական ծրագրին համապատասխան լրացուցիչ կրթական ծրագրով վերապատրաստում անցնող սովորողների ամփոփիչ համալիր քննության կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունների նկատմամբ, բացառությամբ սովորողներին որակավորում շնորհելու, մասնագիտական կրթության համապատասխան որակավորման աստիճանի ավարտական փաստաթուղթ և համապատասխան կրծքանշան տալու, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի և քննական հանձնաժողովների նիստերի արձանագրությունների վերաբերյալ դրույթների:

1.3. Սույն կարգի իրավական հիմք են հանդիսանում ՀՀ կրթության և գիտության նախարարի 21.07.2006թ. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 638-Ն հրամանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 19.06.2020թ. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 1032.01.4 «Ոստիկանական գործ» մասնագիտության 1032.01.02.4 «Պարեկ» որակավորման պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 14-Ն հրամանը, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնում ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը, ՀՀ ոստիկանության կրթահամալիրում վերապատրաստման գործընթացի կազմակերպման կարգը:

1.4. Ամփոփիչ ատեստավորումն ուսումնական գործընթացի ավարտական փուլն է, որի նպատակն է որոշել շրջանավարտների մասնագիտական որակավորման մակարդակը՝ պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան:

1.5. Ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է «Ոստիկանության վարչական գործունեություն», «Վարչական իրավունք» և «Ծառայության իրականացման մարտավարություն» մոդուլներից համալիր քննության ձևով:

2. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2.1. Ամփոփիչ ատեստավորման կազմակերպման ու անցկացման նպատակով ձևավորվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողով:

2.2. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

1) տալ պետական կրթական չափորոշիչներին շրջանավարտի պատրաստվածության աստիճանի և որակավորման բնութագրի համապատասխանության համալիր գնահատական,

2) որոշել ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտներին որակավորում շնորհելու, մասնագիտական կրթության համապատասխան որակավորման աստիճանի ավարտական փաստաթուղթ և համապատասխան կրծքանշան տալու հարցը,

3) ներկայացնել Կրթահամալիրում մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ առաջարկություններ:

2.3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համալիր քննությունն ընդունող քննական հանձնաժողովներ, որոնց քանակը պայմանավորված է սովորողների քանակով և ամփոփիչ ատեստավորման անցկացման համար նախատեսված ժամանակահատվածով:

2.4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի և ամփոփիչ քննությունն ընդունող քննական հանձնաժողովների թվակազմերը որոշվում են կատարվելիք աշխատանքի ծավալից ելնելով:

2.5. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կազմված է նախագահից, նրա տեղակալից, քարտուղարից և հանձնաժողովի անդամներից: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալը, քարտուղարը, անդամները և քննական հանձնաժողովների նախագահները նշանակվում են ՀՀ ոստիկանության պետի հրամանով:

2.6. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ նշանակվում է շրջանավարտների ապագա գործունեության ոլորտի առաջատար մասնագետներից կամ գիտնականներից որևէ մեկը կամ ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող անձ: Հանձնաժողովի նախագահը չպետք է լինի կրթահամալիրի աշխատող: Հանձնաժողովի նախագահը սահմանված կարգով կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքը, նախագահում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերը, ստորագրում դրա որոշումներն ու արձանագրությունները և ապահովում շրջանավարտների պատրաստվածության աստիճանի գնահատման օբյեկտիվությունը:

2.7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահն իրավասու է՝

1) գլխավորելու քննական հանձնաժողովներից մեկը (քննական հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում) և հանձնաժողովի անդամի իրավունքով մասնակցելու դրանցից ցանկացածի աշխատանքին,

2) դադարեցնելու այն սովորողների մասնակցությունը ամփոփիչ համալիր քննությանը, ովքեր կատարել են ամփոփիչ համալիր քննության կարգի խախտում:

2.8. Կրթահամալիրի պետն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի տեղակալն է:

2.9. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի քարտուղար նշանակվում է Կրթահամալիրի ծառայողներից:

2.10. Քննական հանձնաժողովների նախագահները չպետք է լինեն կրթահամալիրի աշխատողներ:

2.11. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներ կարող են նշանակվել Կրթահամալիրի աշխատողներ, ոստիկանության ծառայողներ, այլ պետական մարմինների և գերատեսչությունների ներկայացուցիչներ:

2.12. Ամփոփիչ ատեստավորման գործընթացին դիտորդի կարգավիճակով իրավասու են մասնակցել այն միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք ընդգրկված էին պարեկային ծառայությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ուսուցման ընդունելության գործընթացում:

2.13. Ամփոփիչ քննություն ընդունող քննական հանձնաժողովների անդամները և քարտուղարները նշանակվում են Կրթահամալիրի պետի հրամանով: Ամփոփիչ քննություն ընդունող քննական հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներ, այդ թվում՝ պայմանագրային հիմունքներով դասավանդող դասախոսներ, ինչպես նաև ոստիկանության ծառայողներ, այլ մասնագիտական բուհերի դասախոսներ: Յուրաքանչյուր քննական հանձնաժողովի կազմում ներառվում է հանձնաժողովի քարտուղար Կրթահամալիրի աշխատողներից:

3. ԱՄՓՈՓԻՉ ՀԱՄԱԼԻՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3.1. Ամփոփիչ ատեստավորման (վերապատրաստման ամփոփիչ համալիր քննության) թույլատրվում են այն սովորողները, ովքեր ավարտել են հիմնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման լրիվ դասընթացը և հաջողությամբ հանձնել ուսումնական պլանով նախատեսված բոլոր ստուգարքները և դիֆերենցված ստուգարքները:

3.2. Ամփոփիչ համալիր քննությունների ժամանակացույցը՝ ըստ դասակների և քննական հանձնաժողովների, համաձայնեցվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հետ և հաստատվում է Կրթահամալիրի պետի կողմից:

3.3. Սովորողները ամփոփիչ համալիր քննությունը հանձնում են քննական հանձնաժողովների բաց նիստերում՝ հանձնաժողովների կազմի առնվազն երկու երրորդի պարտադիր մասնակցությամբ:

3.4. Ամփոփիչ համալիր քննությունն անցկացվում է բանավոր ձևով, տոմսերի միջոցով: Յուրաքանչյուր տոմս բովանդակում է մեկական հարց «Ոստիկանության վարչական գործունեություն», «Վարչական իրավունք» և «Ծառայության իրականացման մարտավարություն» մոդուլներից, ինչպես նաև մեկ իրավիճակային խնդիր: Ամփոփիչ համալիր քննության հարցաշարը, տոմսերը և իրավիճակային խնդիրները հաստատվում են Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի հատուկ պատրաստականության կրթաճյուղի նիստում: Ամփոփիչ համալիր քննության հարցաշարը սովորողներին տրամադրվում է ամփոփիչ համալիր քննությունից առնվազն երկու շաբաթ առաջ:

3.5. Ամփոփիչ համալիր քննությանը դասակի սովորողների ներկայանալու հերթականությունը որոշվում է քննական հանձնաժողովի նախագահի կողմից՝ հաշվի առնելով սովորողների ցանկությունը, իսկ դրա բացակայության դեպքում՝ սովորողների ազգանունների և անունների այբբենական կարգը:

3.6. Ամփոփիչ համալիր քննությանը ներկայացած սովորողի նույնականացումը քննական հանձնաժողովը կատարում է սովորողի ստուգման գրքույկի կամ անձը հաստատող փաստաթղթի միջոցով:

3.7. Ամփոփիչ համալիր քննության անցկացման ընթացքում քննասենյակում որպես կանոն կարող են միաժամանակ գտնվել պատասխանին պատրաստվող առավելագույնը 5 սովորողներ:

3.8. Ամփոփիչ համալիր քննությանը ներկայացած սովորողն ընտրում է տոմսը, որից հետո նրան տրամադրվում է առնվազն 30 րոպե պատրաստվելու համար: Տոմս փոխելն արգելվում է : Պատասխանին պատրաստվելիս նշումներ կատարելու համար հանձնաժողովը սովորողին տրամադրում է կնիքված թերթիկներ :

3.9. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամն իրավունք ունի սովորողի գիտելիքները, կարողությունները և հմտությունները գնահատելու համար նրան տալ ճշգրտող և լրացուցիչ հարցեր՝ ամփոփիչ համալիր քննության հարցաշարի սահմաններում:

3.10. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամը պարտավոր է օբյեկտիվ գնահատել սովորողի պատասխանը՝ հիմք ընդունելով բացառապես սույն կարգով սահմանված գնահատման չափանիշները:

3.11. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամին արգելվում է՝

1) պատասխանել սովորողների կողմից տրված՝ հարցերի և իրավիճակային խնդրի վերաբերյալ բովանդակային հարցերին,

2)սովորողներին հայտնել կամ հուշել հարցի կամ իրավիճակային խնդրի պատասխանը,

3) սովորողներին տալ ամփոփիչ համալիր քննության հարցաշարով չնախատեսված հարցեր:

3.12. Սովորողն իրավունք ունի գնահատականը հայտարարելուց հետո քննական հանձնաժողովից ստանալ բանավոր պարզաբանում գնահատման չափանիշների վերաբերյալ:

3.13. Սովորողը պարտավոր է՝

1) ամփոփիչ համալիր քննությանը ներկայանալ սահմանված ժամին, իր ստուգման գրքույկով կամ անձը հաստատող փաստաթղթով,

2) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների և այլ սովորողների նկատմամբ դրսևորել հարգալից վերաբերմունք :

3.14. Սովորողին արգելվում է՝

1) իր մոտ ունենալ բջջային հեռախոս, այլ էլեկտրոնային սարքեր, տեխնիկական միջոցներ, ուսումնական նյութեր կամ ծածկագրեր կամ օգտվել դրանցից,

2) հաղորդակցվել այլ սովորողների հետ, միմյանց փոխանցել տոմսերը կամ նշումների համար դասախոսի կողմից տրամադրված թերթիկները,

3) աղմկել կամ այլ կերպ խոչընդոտել ամփոփիչ համալիր քննության անցկացմանը :

(1-ին ենթակետը փոփոխվել է գիտական խորհրդի 16.02.2022 թ. որոշմամբ, արձ. թիվ 2)

3.15. Եթե ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամը հայտնաբերում է, որ պատասխանին պատրաստվող կամ պատասխանող սովորողը թույլ է տվել ամփոփիչ համալիր քննության կարգի խախտում, ապա այդ մասին հայտնում է քննական հանձնաժողովի նախագահին: Վերջինս խախտման մասին հայտնում է սովորողին և նախազգուշացնում այն մասին, որ երկրորդ անգամ ամփոփիչ համալիր քննության կարգի խախտում թույլ տալու դեպքում նրա մասնակցությունը ամփոփիչ համալիր քննությանը կդադարեցվի:

3.16. Եթե ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամը հայտնաբերում է, որ պատասխանին պատրաստվող կամ պատասխանող սովորողը երկրորդ անգամ թույլ է տվել ամփոփիչ համալիր քննության կարգի խախտում, ապա քննական հանձնաժողովի նախագահի միջոցով այդ մասին հայտնում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին: Վերջինս դադարեցնում է ամփոփիչ համալիր քննությանը տվյալ սովորողի մասնակցությունը:

3.17. Սովորողի կողմից ամփոփիչ համալիր քննության կարգի խախտում է համարվում ամփոփիչ համալիր քննության ընթացքում հետևյալ արարքներից առնվազն մեկի կատարումը՝

1) իր մոտ բջջային հեռախոս, այլ էլեկտրոնային սարքեր, տեխնիկական միջոցներ, ուսումնական նյութեր կամ ծածկագրեր ունենալը կամ դրանցից օգտվելը,

2) այլ սովորողների հետ հաղորդակցվելը, տոմսերը կամ նշումների համար տրամադրված թերթիկները այլ սովորողներին փոխանցելը,

3) աղմկելը կամ այլ կերպ ամփոփիչ համալիր քննության անցկացմանը խոչընդոտելը,

4) ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների կամ այլ սովորողների նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելը:

(1-ին ենթակետը փոփոխվել է գիտական խորհրդի 16.02.2022 թ. որոշմամբ, արձ. թիվ 2)

3.18. Սովորողի կողմից կատարված արարքը որպես ամփոփիչ համալիր քննության կարգի խախտում գնահատելու և դրա հիման վրա ամփոփիչ համալիր քննությանը սովորողի մասնակցությունը դադարեցնելու մասին որոշումն ընդունում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահը՝ հաշվի առնելով սովորողի արարքի ազդեցությունը ամփոփիչ համալիր քննության բնականոն ընթացքի, ինչպես նաև սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման օբյեկտիվության վրա:

3.19. Ամփոփիչ համալիր քննությանը սովորողի մասնակցությունը դադարեցնելու մասին ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահը կազմում է արձանագրություն: Արձանագրության մեջ նշվում է ամփոփիչ համալիր քննության անցկացման օրը, դասակը, սովորողի անունը, հայրանունը և ազգանունը, ամփոփիչ համալիր քննությանը սովորողի մասնակցությունը դադարեցնելու հիմքը: Արձանագրությունը ստորագրվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի և սովորողի կողմից: Սովորողի կողմից արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահն այդ մասին նշում է արձանագրության մեջ:

3.20. Ամփոփիչ համալիր քննությանը սովորողի մասնակցությունը դադարեցնելու դեպքում քննության տեղեկագրում որպես գնահատական ամրագրվում է 0 միավորը:

3.21. Ամփոփիչ համալիր քննության արդյունքներով սովորողը ստանում է 0-ից 10 միավորային համակարգով գնահատական, հետևյալ սանդղակով.

գնահատականը թվերով	գնահատականը տառերով
0	անբավարար
1	
2	
3	
4	բավարար
5	
6	
7	լավ
8	
9	գերազանց
10	

3.22. Ամփոփիչ համալիր քննության գնահատականը ձևավորվում է տոմսում բովանդակվող երեք հարցերի պատասխանների և իրավիճակային խնդրի պատասխանի գնահատականների հանրագումարից: Յուրաքանչյուր հարցի պատասխանը գնահատվում է 0-ից 3 միավոր, 0,5 միավոր գնահատման քայլով: Իրավիճակային խնդրի պատասխանը գնահատվում է 0-ից 1 միավոր, 0,5 միավոր գնահատման քայլով: Եթե երեք հարցերի պատասխանների և իրավիճակային խնդրի պատասխանի գնահատականների հանրագումարը կազմում է ոչ ամբողջական թիվ, ապա գնահատականի 0,5 միավորը կլորացվում է մինչև 1 միավոր:

3.23. Տոմսի հարցին սովորողի կողմից տրված պատասխանը գնահատելիս հաշվի է առնվում պատասխանի վերաբերելիությունը հարցին, պատասխանի ճշտությունը և լրիվությունը: Իրավիճակային խնդրի պատասխանը գնահատելիս հաշվի է առնվում պատասխանի ճշտությունը և դրա հիմնավորման լիարժեքությունը:

3.24. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի և քննական հանձնաժողովների որոշումներն ընդունվում են փակ նիստերում՝ նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

3.25. Ամփոփիչ համալիր քննության գնահատականը ամրագրվում է ամփոփիչ համալիր քննության տեղեկագրում, իսկ նախնական մասնագիտական կրթական ծրագրով սովորողների գնահատականը՝ նաև քննական հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ:

3.26. Ամփոփիչ համալիր քննության գնահատականները սովորողներին հայտարարվում են նույն օրը՝ քննական հանձնաժողովի կողմից քննական տեղեկագիրը լրացնելուց և հանձնաժողովի արձանագրությունը կազմելուց հետո:

3.27. Ամփոփիչ ատեստավորման արդյունքները ձևակերպվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ, որը հիմք է շրջանավարտներին ավարտական փաստաթղթեր և համապատասխան ձևի կրծքանշաններ տալու համար:

3.28. Պետական ամփոփիչ ատեստավորումն անցած սովորողներին շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում է կրթությունը հաստատող ավարտական փաստաթուղթ: Գերազանցության դիպլոմ տրվում է ուսումնական կենտրոնի այն սովորողներին, որոնք ուսումնական պլանով նախատեսված առարկաների դիֆերենցված ստուգարքների 75%-ից ոչ պակասը հանձնել են «Գերազանց», իսկ մնացած դիֆերենցված ստուգարքները՝ «Լավ» գնահատականներով, միաժամանակ,

պետական ամփոփիչ ատեստավորումը հանձնել են «Գերազանց» գնահատականով: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի քարտուղարը անմիջականորեն պատասխանատու է շրջանավարտների գերազանցության դիպլոմ տալու իրավական և փաստական հիմքերի մասին հանձնաժողովին ներկայացվող տեղեկատվության հավաստիության համար: Նշված տեղեկատվությունը հանձնաժողովին ներկայացնելու վերաբերյալ հանձնաժողովի քարտուղարի կողմից կազմվում է արձանագրություն:

3.29. Լրացուցիչ կրթական ծրագրով ամփոփիչ համալիր քննությունից բավարար և ավելի բարձր գնահատական ստացած սովորողներին տրվում է վերապատրաստման վկայական:

3.30. Ամփոփիչ ատեստավորումից (վերապատրաստման ամփոփիչ համալիր քննությունից) անբավարար գնահատական ստացած սովորողներին Կրթահամալիրի պետը թույլատրում է վերաատեստավորման (վերաքննության) մեկ անգամ՝ ատեստավորում չանցնելու (քննությունից անբավարար գնահատական ստանալու) օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ատեստավորում չանցնելու (քննությունից անբավարար գնահատական ստանալու) օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում սովորողները Կրթահամալիրի պետին ներկայացնում են զեկուցագիր վերաատեստավորման թույլտվության համար:

3.31. Համապատասխան փաստաթղթերով հիմնավորված՝ հարգելի պատճառով պետական ամփոփիչ ատեստավորմանը (վերապատրաստման ամփոփիչ համալիր քննությանը) չներկայացած սովորողներին Կրթահամալիրի պետը թույլատրում է մասնակցել ատեստավորմանը (քննությանը)՝ ատեստավորմանը (քննությանը) չներկայանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ատեստավորմանը (քննությանը) չներկայանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում սովորողները Կրթահամալիրի պետին ներկայացնում են զեկուցագիր ատեստավորմանը (քննությանը) մասնակցելու թույլտվության համար:

3.32. Պետական ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ սովորողների համապատասխան որակավորման և ավարտական նմուշի փաստաթղթի (դիպլոմի) շնորհման, ինչպես նաև ուսումնական հաստատության ավարտելու վերաբերյալ տրվում է Կրթահամալիրի պետի հրաման: